«ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

«04» հունիսի 2014 թ. N 2

ք.Ստեփանակերտ

Հիմք ընդունելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի ժ) կետի ժբ) ենթակետը, «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության կանոնադրության 11.6 կետի ե) ենթակետը և «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության 02.06.2014թ. կայացած բաժնետերերի ընդհանուր ժողովի թիվ 1-2014 արձանագրությունը՝ «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը ո ր ո շ ու մ է՝

Հաստատել «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության 2013 թվականի ֆինանսատնտեսական գործունեության տարեկան հաշվետվությունները, հաշվապահական հաշվեկշիռները:

Հաստատել զուտ շահույթի բաշխման համամասնությունները, այդ թվում՝ միջանկյալ շահութաբաժինների մեկ բաժնետոմսի անվանական արժեքի նկատմամբ 1,6 % տարեկան եկամտաբերության հաշվարկով ընդամենը 170 400 000 (հարյուր յոթանասուն միլիոն չորս հարյուր հազար) ՀՀ դրամ և մասհանումներ Գլխավոր պահուստին՝ զուտ շահույթի 5%-ի չափով 31 155 000 (երեսունմեկ միլիոն հարյուր հիսունհինգ հազար) ՀՀ դրամ:

Ժողովի նախագահ՝ **Ս. Թևոսյան**